**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 27 փետրվարի 2017թ.
ժամը 11⁰⁰

**Մասնակցում էին**
*Գնահատողներ՝*
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռիստյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
**Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/4» ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ. Վարդանյան)

1. Մասնակիցների՝ բաց մրցույթ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց՝ բաց մրցույթ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց՝ բաց մրցույթ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Գ. Վարդանյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «Մոսէսքո» ՍՊԸ-ի և «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են, սակայն, «Մոսէսքո» ՍՊԸ-ի և «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների շտկման նպատակով, հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և մասնակիցներից պահանջել տեխնիկական բնութագրի շտկում, մասնավորապես՝ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխսրնութագրերում բացակայում էին հետևյալ տողերը՝ «4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի հետևյալ տողը՝ «ԳՕՍՏ 10541-78 Մ-8Բ մակնիշի, Միջազգ.ստանդ. API: SD/CB կամ համարժեք», 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում բացակայում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի հետևյալ տողերը՝ «ՏՊ 38.1011282-89», «սառեցման ջերմաստիճանը՝ -45⁰C -ից ոչ բարձր», «մոխրայնություն՝ ոչ պակաս 0.6», 4-րդ և 5-րդ չափաբաժինների համար բացակայում է հրավերով նախատեսված ծանոթություն դաշտը», «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխսրնութագրերում բացակայում էր հրավերով նախատեսված ծանոթություն դաշտը: Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում նշված անհամապատասխանությունները շտկվել են:

Գնահատման հետագա ընթացքում, մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերի՝ հրավերով պահանջներին համապատասխանության /համարժեքություն/ վերաբերյալ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը, մինչև ՊՍ-ի գնահատող անդամ ՀՀ ԶՈՒ թիկունքի ՎՔՆ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյանի կողմից մասնագիտական եզրակացության տրամադրելը: Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով ՊՍ-ի կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը (N514/624 առ 02.03.2018թ.) համարժեքության վերաբերյալ, որոշեց «Մոսէսքո» ՍՊԸ-ի և «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը համարել համապատասխանող «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին:

22.02.2018թ. ստացվել է ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառ. 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 06.03.2018թ. հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման չափանիշները գնահատել համապատասխանող «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից, իսկ 2-րդ, 3-րդ, 6-րդ և 12-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետ 1-ին ենթակետի համաձայն:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

2.1 Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓԶ վարչության նիստերի դահլիճում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

| | |
|---|---|
| **Գնահատող (ԳԱՊ)** | Վ. Գասպարյան |
| **Գնահատող** | Կ. Մխիթարյան |
| **Գնահատող** | Գ. Ռուստյան |
| **Գնահատող** | Ս. Նիկոլյան |
| **Գնահատող** | Ա. Մաղաքյան |
| **Գնումները համակարգող՝** | Գ. Վարդանյան |